ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 0367
04 FEB 2022
Կից ✓ Նշում

Գրանցման՝ 460havelvac

« 03 » փետրվար 2022թ. No 460 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103003522 առ 14.01.2022.թ փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 6 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

Հասկ. 04.02.22 J.09 45

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

03.02.2022

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2022 թվականի փետրվար « 03 » - ի N 460 - Ա հրամանի

ԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

h	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողն-ման կարգ ավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ	Գրանցման ընթացակարգ
1.	Տենոքսին	տենօքսիկամ	դեղափոշի լիոֆիլացված ներարկման լուծույթի	20մգ; (1) ապակե սրվակ 3մլ և լուծիչ (1) ամպուլ 2մլ	Անֆարմ Հելլաս Ս.Ա., Աթենք-Լամիա Ազգային Մայրուղու 61-րդ կմ, Սխիմատարի Վիոտիաս, 32009	Հունաստան	Անֆարմ Հելլաս Ս.Ա., Ախիաս և Տրիզինիաս փ,4, Կիֆիսիա, Ատիկի	Հունաստան	Դ	20437 14.01.2022	Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ)
2.	Ինֆորին Ակտիվ	իբուպրոֆեն, լևոմենթոլ(մենթոլ)	դոնդող արտաքին կիրառման	50մգ/գ+30մգ/գ; 40գ ալյումինե պարկուճ	Բալկանֆարմա-Ռազգրադ ԱԴ, 68 Ապրիլսկո Վաստանիե բուլվար, 7200 Ռազգրադ	Բուլղարիա	Սպեյ Մեդիքըլ ՍՊԸ, Լինթըն Հաուս 7-12 Տավիստոկ հրապարակ, Լոնդոն, Վ31Հ 9ԼՏ	Միացյալ Թագավորություն	ԱԴ	20438 14.01.2022	Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ)
3.	Ատորվաստատին Ալկալոիդ	ատորվաստատին (ատորվաստատին կալցիում տրիհիդրատ)	դեղահատեր թաղանթապատ	10մգ; (30/3x10/) բլիստերում	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Դ	20439 14.01.2022	Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ)
4.	Ատորվաստատին Ալկալոիդ	ատորվաստատին (ատորվաստատին կալցիում տրիհիդրատ)	դեղահատեր թաղանթապատ	20մգ; (30/3x10/) բլիստերում	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Դ	20440 14.01.2022	Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ)
5.	Ատորվաստատին Ալկալոիդ	ատորվաստատին (ատորվաստատին կալցիում տրիհիդրատ)	դեղահատեր թաղանթապատ	40մգ; (30/2x15) բլիստերում	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Դ	20441 14.01.2022	Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ)
6.	Ատորվաստատին Ալկալոիդ	ատորվաստատին (ատորվաստատին կալցիում տրիհիդրատ)	դեղահատեր թաղանթապատ	80մգ; (30/3x10/) բլիստերում	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Դ	20442 14.01.2022	Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ)